ՀԱՍՏԱՏ[illegible]

Տնօրեն

2023 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Կոտայքի մարզ

ՀրազդանիN 7 միջնակարգ դպրոց, I դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Դանիելյան Գայանե Արմեն

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023-2024» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ/ *դասարանի ընդհանուր բնութագիրը/ 2 - դասարանում սովորում են 7 աշակերտ՝ 2 տղա և 5 աղջիկ: Դասարանում սոցիալապես անապահով երեխաներ չկան : Բոլորն էլ սիրով, մաքուր և կոկիկ հագնված են հաճախում դպրոց:*

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.*Հայեցի դաստիարակություն*

*2.Գեղագիտական դաստիարակություն*

*3.Աշխատանքային դաստիարակություն*

*4.Հոգևոր դաստիարակություն*

*5.Հայրենասիրական դաստիարակություն*

*6.Անվտանգ երթևեկություն*

*7.Ֆիզիկական և առողջապահական դաստիարակություն*

*8.Աշխատանք ծնողների հետ*

*9. Բնապահպանական դաստիարակություն*

*10.Աշխատնք դասարանի հետ*

*11.Դպրոց-ընտանիք կապը*

*12.Ծնողական ժողովներ*

*13.Հիշարժան օրեր*

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն - *Կազմակերպել էքսկուրսիաներ հոգևոր կենտրոններ: Զրույց՝ <<Մեկ ազգ, մեկ եկեղեցի>> թեմայով: Մասնակից դարձնել համադպրոցական միջոցառումներին, որոնք վերաբերում են հայ քրիստոնեական ավանդույթներին: Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասաժամին ուսումնասիրած թեմաներից ստացած գիտելիքները օգտագործեն առօրյայում, տեղին և ժամանակին համապատասխան:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն –*դաստիարակել սեր և ձգտում գեղեցիկը, արվեստը ընկալելու հանդեպ: Ձևավորել գեղագիտական ճաշակ, գնահատել գեղեցիկը, լավը, բարին: Դաստիարակել հոգատար վերաբերմունք դպրոցի և գույքի նկատմամբ: Ապահովել ակտիվ մասնակցություն կազմակերպվող միջոցառումներին /դիտել ֆիլմեր, բեմականացումներ, համերգներ/:*

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն- *ՀՀ օրհներգի, դրոշի և զինանշանի հետ ծանոթացում: Մասնակից դարձնել անկախության , բանակի օրվան նվիրված և նմանատիպ միջոցառումներին : Այցելել պատմական հուշարձաններ: Հայրենիքին և մայրենի լեզվին նվիրված ստեղծագործությունների ուսուցում: Հաճախակի կազմակերպել զրույցներ հայրենասիրության թեմաներով, ազգային հերոսների մասին: Լսել ազգային հայրենասիրական երգեր:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն- *Հետևել երեխաների կեցվածքին: Կազմակերպել սպորտային խաղեր և մրցույթ տարրական դասարանների աշակերտների միջև: Ապահովել դասաժամերին պարտադիր ֆիզկուլտ դադարները:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն- *Դաստիարակել աշխատասիրություն՝ պահպանել մաքրություն շրջապատում, շաբաթական մեկ անգամ կազմակերպել և անցկացնել սանիտարական ժամ: Կազմակերպել զրույց՝ <<Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն, աշխատանքը մայրն է ամեն բարիքի >> թեմաներով: Խնամել դպրոցի ծաղկանոցը: Սահմանել հերթապահություն և հետևել դասարանի մաքրությանը:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն- *Դաստիարակել սեր և հոգատարություն բնության նկատմամբ: Ճանաչել ու սիրել հայրենի բնությունը, պահպանել ու խնամել: Սահմանել հսկողություն շրջապատող բնության պահպանության նկատմամբ: Ձմռանը կերակրել և խնամել մեզ մոտ ձմեռող թռչուններին:*

4. Դպրոց-ընտանիք կապը- *Սերտ կապ պահպանել ծնողների հետ: Հրավիրել ծնողական ժողովներ, այցելություններ ընտանիք: Կազմակերպել ծնողների մասնակցությունը դասապրոցեսին, դպրոցի առօրյային, միջոցառումներին: Տեղյակ պահել էլեկտրոնային մատյանից օգտվելու անհրաժեշտությանը:*

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Սահմանել հերթապահություն և հետևել աշխատանքին | | դասվար |
| II | Զրույց << Աշխատանքն է ամեն բարիքի ,, թեմայով | | դասվար |
| III | Զրույց << Անկախ Հայաստան >> թեմայով | | դասվար |
| IV | << Քո պահվածքը շրջապատում >> թեմայով | | դասվար |
| V | Զրույց նվիրված ուսուցչի օրվան | | դասվար |
| VI | Բնության պահպանումը մեր պարտքն է | | դասվար |
| VII | Աշնանային տերևների հավաքում և չորացում | | դասվար |
| VIII | Բարեկիրթ կանոնների մշակում՝ << Հարգանք փոքրերի, մեծերի նկատմամբ >> | | դասվար |
| IX | Զրույց՝ << Դժվարի ընկեր գտնելը չէ, այլ՝ պահելը >> թեմայով | | դասվար |
| X | Արդյունավետ հաղորդակցում : Պատմ. << Ով է մեղավոր >>: | | դասվար |
| XI | Համագործակցություն՝ պատմ. << Մեր բակի պատմությունը >> / էջ 3-7/ | | դասվար |
| XII | Զրույց << Իմ հայրենիքը Հայաստանն է>> թեմայով | | դասվար |
| XIII | Արդ. Հաղորդակցում : Պատմ. << Ա՜յ քեզ, բ՜ան >>: | | դասվար |
| XIV | Զրույց՝ << Իմ հայրենիքը >> թեմայով: | | դասվար, աշակերտներ |
| XV | Համագործակցություն: Պատմություն՝ << Օգնել միմյանց>> : | | դասվար |
| XVI | Տարեմուտի ուրախ հանդեսի անցկացում | | դասվար |
| XVII | Հեքիաթի ընթերցում և քննարկում | | դասվար |
| XVIII | Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում: Վարժ.՝ << Որոշումների ծառը >>: | | դասվար |
| XIX | Երեխաների իրավունքներ: Վարժ.՝ << Ինչ կուզենայի ունենալ >>: | | դասվար |
| XX | Զրույց՝ <<Մեր դպրոցը մեր հարուստունն է, այն պահպանենն…>> | | դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| XXI | Երեխաների իրավունքներ: Պատմ. << Երեխայի իրավունքների պաշտպանը >> | | դասվար |
| XXII | Կոնֆլիկտների հաղթահարում: Վարժ.՝ << Հրաժեշտ վիրավորանքին:>.: Պատմ.՝ << Արի հաշտվենք>> / էջ 55-61/: | | դասվար |
| XXIII | Բանակցություններ: Վարժ. << Բռունցքդ բաց արա>>: | | դասվար |
| XXIV | Պատմ.՝ Կախարդական ծառը>> / էջ 69-74/ | | դասվար |
| XXV | Զրույց՝ << Ով գարնանը քնի, աշնանը լաց կլինի>> ասվածքի շուրջ: | | դասվար |
| XXVI | Զրույց << Անվտանգ երթևեկությունը>. Թեմայով: | | դասվար |
| XXVII | Անդուրժողականություն: <<Խտրականություն>> վարժ.: | | դասվար |
| XXVIII | Պատմություն՝ << Վարակիչ քուչոն>>: | | դասվար |
| XXIX | Շրջակա միջավայր: Վարժ. << Օգնենք երկրին>> : Պատմ.՝ << Աղբն ո՞վ թափեց>> | | դասվար |
| XXX | Զրույց՝ << Այսօր օգտակար գործ եմ կատարել>>: | | դասվար |
| XXXI | Բանակցություններ, դերն ու նշանակությունը: | | դասվար |
| XXXII | Էքսկուրսիա | | դասվար |